<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >>

ՊՈԱԿ

ք. Արարատ, Շահումյան 62/1 /0238/ 4-30-17

г. Арарат, Шаумян 62/1 /0238/ 4-30-17
t. Ararat, Shahumian 62/1 /0238/ 4-30-17
email- araratcollege@schools.am

<< 06 >> 10 2021թ

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Ռ. Թևոնյանին

Հարգելի՛ պարոն Ռ.Թևոնյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021թ. հոկտեմբերի 6-ի <<Կրթություն>> շաբաթաթերթում հայտարարված տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը կկայանա Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցում 2021 թվականի հոկտեմբերի 21-ին, ժամը 14^{00} - ին:

Կից ներկայացվում է մրցույթի հայտարարությունը:

Առդիր 1 էջ:

Տնօրեն՝ /Գ.Հովհաննիսյան/

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ << ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին ներկայանում է՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ)
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերը ընդունվում են հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. հոկտեմբեր 21-ին, ժամը 14 : 00-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Արարատ, Շահումյան 62/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-30–17, (093) 81-49-21 հեռախոսահամարներով: